ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՏՆՕՐԵՆ

N ՏԾԻԳ 82
«23» 02 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3 » ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3-ՏԿՆ-15/4»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ, քան ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ աշխատանքային օրվա ընթացքում ժամը 15:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Միլենա Գասպարյանը:

Հայտերը կբացվեն կայքի միջոցով 2015 թվականի մարտի 5-ին ժամը 15:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N307 սենյակ հասցեում: Գնման առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման ձեռքբերումը, որը խմբավորված է 27 (քսանյոթ) չափաբաժինների՝

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը
1.	Հաշվասարք, գրասենյակային
2.	Թանաք, կնիքի բարձիկի համար
3.	Գրիչ, գնդիկավոր

4.	Գրիչ, գելային
5.	Մատիտ, գրաֆիտե, տեղադրվող միջուկով
6.	Շտրիխներ
7.	Սոսնձամատիտ, գրասենյակային
8.	Գծանշիչ
9.	Թղթադարակ, հարկերով, պլաստմասե
10.	Կարիչի մետաղալարե կապեր միջին
11.	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ
12.	Թղթապանակ, արագակար, թղթյա
13.	Թղթապանակ, կոշտ կազմով
14.	Կարիչ, մինչև 20 թերթի համար
15.	Կարիչ,20- 50 թերթի համար
16.	Դակիչ, քանոնով
17.	Թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/
18.	Թուղթ, ֆաքսի, ժապավեն
19.	Նամակի ծրար, A5 ձևաչափի
20.	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար
21.	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով
22.	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD
23.	Ֆլեշ հիշողություն, 8GB
24.	Գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով
25.	Ամրակ, մետաղյա, փոքր
26.	Սեղմակ, միջին
27.	Քանոն պլաստիկ

Տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար՝ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցը պետք է ներառված լինի գրենական պիտույքներ և գրասենյակային նյութերի ձեռքբերման համար «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագիր կնքած անձանց ցուցակում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

- գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

2) «Ֆինանսական չափորոշիչ».

- գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի

կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 5 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերով (ծանուցմամբ) նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով (գնման էլեկտրոնային եղանակ) սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mgasparyan@transportpiu:

Հարգանքով՝

Է. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող
Գնումների և պայմանագրերի
կառավարման բաժին՝ Մ.Գասպարյան
հեռ. (+37410) 59-00-20